ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ՂԱԶԱԽԵՑՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻՆ

1918 թ. մայիսին Հայաստանի անկախության վերանվաճման արդյունքում նոր փուլ սկսվեց Հայոց պետականության բազմադարյան պատմության մեջ: Այդ դարակազմիկ իրադարձությունն էլ պատմաբանների կողմից ընդունված է համարել Հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի սկիզբ:

Անցնող տասնամյակների ընթացքում հայաստանյան և Սփյուռքի պատմաբանների կողմից հարյուրավոր ուսումնասիրություններ են հրատարակվել Հայաստանի նորագույն պատմության տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Հայ պատմաբանները հավուր պատշաճի ուսումնասիրել են Հայաստանի Առաջին (1918–1920 թթ.), Երկրորդ կամ Խորհրդային (1920–1991 թթ.), Երրորդ (1991 թվականից սկսած) հանրապետությունների պատմությունը: Չնայած դրան՝ այսօր ևս նորանոր ուսումնասիրություններ են կատարվում նորագույն շրջանի պատմության թեմատիկայով, ինչը պայմանավորված է նրա քաղաքական արդիականությամբ, նաև թուրք-ադրբեջանական պատմագիտության կեղծիքները բացահայտելու ու ըստ արժանվույն պատասխանելու՝ հայ պատմաբանների քաղաքացիական պարտքով: Հայաստանի և աշխարհի զանազան երկրների արխիվներում պահվող ու դեռևս շրջանառության մեջ չդրված փաստաթղթերը պատմաբան-հետազոտողներին հնարավորություն են ընձեռում Հայաստանի նորագույն ժամանակաշրջանի պատմության բազմաթիվ անհայտ ծալքեր բացահայտել:

Հայաստանի նորագույն շրջանի պատմությամբ մասնագիտացող պատմաբան կադրերի պատրաստման ու կատարելագործման ասպարեզում մեծ է եղել 1980–2010 թթ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժինը ղեկավարած պ. գ. դ., պրոֆ. Վլադիմիր Ղազախեցյանի (1926–2015) ներդրումը: Նրա ղեկավարությամբ բաժնի գիտաշխատողներն ու ասպիրանտները մշակել են նորագույն ժամանակաշրջանի պատմության բազմաթիվ թեմաներ, պաշտպանել թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ: Ուստի ամենևին պատահական չէ, որ 2016 թ. մարտի 4–7-ին Պատմության ինստիտուտի կազմակերպած «Հայաստանի նորագույն պատմության ուսումնասիրության վիճակը և խնդիրները» խորագրով գիտաժողովը նվիրված էր անվանի պատմաբանի 90-ամյակին:

Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ մարտի 4-ին Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն,

ակադեմիկոս Ա. Մելքոնյանը*: Այնուհետև ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս* Յ. Սուվարյանը*, ԳԱԱ նախագահության խորհրդական, ակադեմիկոս* Վլ. Բարխուդարյանը*, Հայաստանի ազգային արխիվի տնօրեն, պ. գ. դ.* Ա. Վիրաբյանը*, Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ.* Ֆ. Մովսիսյանը*, Վ. Ղազախեցյանի նախկին ասպիրանտ, պ. գ. թ., դոցենտ* Է. Գևորգյանը*: Ելույթ ունեցողները կարևորեցին Հայաստանի նորագույն պատմության խնդիրներին նվիրված գիտաժողովի անցկացումը, առանձնահատուկ խոսեցին երիտասարդ մասնագետների պատրաստման գործում պրոֆ. Վ. Ղազախեցյանի ունեցած ներդրման մասին:*

Այնուհետև պ. գ. թ., դոցենտ Հ. Սուքիասյանը *ներկայացրեց Վ. Ղազախեցյանի կազմած «ՀՅ Դաշնակցությունը ԽՍՀՄ արտակարգ հանձնաժողովի և պետական քաղաքական վարչության գաղտընթերցումներում (1920-ական թվականներ)» փաստաթղթերի ժողովածուն, որի հրատարակությունը կարևոր տուրք էր անվանի պատմաբանի հիշատակին: Ժողովածուում ընդգրկված է խորհրդային անվտանգության մարմինների կողմից գաղտընթերցված 41 նամակ-փաստաթուղթ, որոնք առնչվում են ՀՅ Դաշնակցության 1921–1927 թթ. գործունեությանը Խորհրդային Հայաստանում (ընդհատակում) և արտասահմանում (հիմնականում Իրանում): Ժողովածուն արժեքավոր աղբյուր է Հայաստանի 1920-ական թվականների պատմության համար և եզակի վկայություններ է պարունակում նշյալ ժամանակաշրջանում ՀՅԴ կուսակցության գործունեության վերաբերյալ: Այն լրացնում է հեղինակի կողմից նախկինում հրատարակված «ՀՅ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը» (1999) և «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)» (2008) ժողովածուներում հրատարակված վավերագրերին:*

Գիտաժողովի առաջին նիստում (նիստավար՝ ակադեմիկոս Ա. Մելքոնյան*) ընթերցվեցին հետևյալ զեկուցումները՝ «Վլադիմիր Ղազախեցյանի գիտական ժառանգությունը» (*Հ. Հարությունյան*), «Հայաստանի նորագույն պատմության պատմագրության որոշ հարցերի շուրջ» (*Վլ. Բարխուդարյան*), «Վլ. Ղազախեցյանի ավանդը Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության ուսումնասիրության բնագավառում» (*Է. Մինասյան*), «Աշոտ Հովհաննիսյանի հրապարակախոսությունը և գիտական աշխարհը 1920–1930-ական թթ.» (*Ն. Սարուխանյան*), «Հայոց պետականության ակունքներն Արցախում» (*Հ. Աբրահամյան*), «Սերնդափոխության հեռանկարները Սփյուռքում Հայաստանի ռազմավարական շահերի համատեքստում» (*Ք. Ավագյան*):*

Գիտաժողովի հաջորդ նիստերը տեղի ունեցան մարտի 6-ին և 7-ին ԳԱԱ Արզականի գիտաժողովների տանը: Երկրորդ նիստում (նիստավար՝ պ. գ. թ., դո-

ցենտ Կ. Խաչատրյան*) ներկայացվեցին հետևյալ զեկուցումները՝ «Վլադիմիր Ղազախեցյանի ներդրումը արխիվային փաստաթղթերի հրատարակման գործում» (*Ա. Վիրաբյան*), «Գրաքննության սկզբնավորումը Խորհրդային Հայաստանում» (*Հ. Սուքիասյան*), «Խորհրդային Հայաստանում այլախոհության պատմության հիմնախնդիրները» (*Ա. Մանուկյան*), «Խորհրդային կրթական քաղաքականության ձևավորումը Հայաստանում 1920-ական թթ.» (*Գ. Վարդանյան*):*

Երրորդ նիստում (նիստավար՝ պ. գ. դ. Ա. Վիրաբյան*) զեկուցեցին* Կ. Խաչատրյանը *(«ՀՍԽՀ-ի և ԼԴԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թթ.»),* Վ. Մելիքյանը *(«Էրզրումի պաշտպանությունը և անկման պատճառները»),* Գ. Մախմուրյանը *(«Դաշնակիցների Գերագույն հանձնակատար Վ. Հասկելի կազմակերպչական, մարդասիրական ու քաղաքական գործունեությունը Հայաստանում 1919 թ.»),* Կ. Հայրապետյանը *(«Գաղթականական վիճակագրության խնդիրը Հայաստանի առաջին հանրապետությունում»),* Գ. Ստեփանյանը *(«1921 թ. փետրվարի 14–18-ի իրադարձությունները Երևանի կենտրոնական բանտում. նոր մանրամասներ Հայհեղկոմի դաժանությունների վերաբերյալ»):*

Գիտաժողովի վերջին՝ չորրորդ նիստում (նիստավար՝ պ. գ. թ., դոցենտ Հ. Սուքիասյան*) ընթերցվեցին հետևյալ զեկուցումները՝ «Խորհրդային Հայաստանի գաղթականների առօրեականության պատմությունից (1920-ական թթ.)» (*Գ. Ժամհարյան*), «Հայաստանի Կարմիր Խաչի ընկերության գործունեությունը սոցիալական ոլորտում 1920-ական թթ.» (*Ս. Ավետիսյան*), ««Հոգևոր եղբայրություն» շարժումը Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920–1930-ական թթ.» (*Կ. Ժամխարյան*), «ՌԴ հայությունը 1990-ական թվականներին. նոր իրողություններ» (*Հ. Ալեքսանյան*), «Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորումը Հայաստանի երրորդ հանրապետությունում» (*Լ. Զաքարյան*):*

Զեկուցումների ավարտից հետո տեղի ունեցավ աշխույժ հարց ու պատասխան, գիտական բանավեճ, երբեմն՝ կարծիքների բախում: Այնուհետև կազմակերպվեց արդյունավետ քննարկում: Վերջում գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց Ա. Մելքոնյանը՝ *հատուկ ընդգծելով, որ ոգևորիչ է պրոֆ. Վ. Ղազախեցյանի հիշատակին նվիրված նման մակարդակի գիտաժողովի անցկացումը, քանզի նա հայտնի էր իր մարդկային ու գիտական բարձր հատկանիշներով, երիտասարդ սերնդի հանդեպ հոգատար վերաբերմունքով: Գիտաժողովի կազմակերպման համար նա շնորհակալական խոսքեր ուղղեց ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի աշխատակիցներին:*

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
ԼԵՎՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ